<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ԱՂԲՅՈՒՐԻ ՋՈՒՐԸ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԱՐՍԵՆ ԵՎ ՆԵՐՍԵՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ /ՍԵՐՎԻՏՈՒՏ/ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հաշվի առնելով, որ Սիսիանի համայնքի վարչական տարածքում առկա են հողամասեր, որոնոնց համար որոշակի վարձավճարի դիմաց կարելի է սահմանել սահմանափակ օգտվելու իրավունք /սերվիտուտ/ և տրամադրել <<Արսեն և Ներսես>> ՍՊԸ-ին Դարբաս բնակավայրում գտնվող աղբյուրի ջուրը <<Արսեն և Ներսես>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գործարանի տարածք հասցնելու համար:

Նշված գործառույթը կնպաստի համայնքային բյուջեի եկամտային մասի ավելացմանը, որոնք կնպատակաուղղվեն համայնքի հետագա ծրագրերի իրականացմանը:

Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս.Հովհաննիսյան

ՏԵՂԵԿԱՆՔ

Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունումից հետո համայնքային բյուջեի ծախսային մասում փոփոխություն չի կատարվի:

Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս.Հովհաննիսյան